

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Գանձասարի վանքը երկար դարեր եղել է ոչ միայն Աղվանից կաթողիկոսների աթոռանիստ, այլև հայ գրչության արվեստի նշանավոր կենտրոն, ուր ԺԵ—ԺԸ դարերի ընթացքում ընդօրինակվել են բազմաթիվ մեսրոպատառ մատյաններ: Պահպանված ու մեզ հասած այդ մատյաններից 12-ը (№№ 38, 1923, 2277, 2561, 3497, 3542, 3971, 4004, 6513, 8504, 8689, 9923) այսօր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ 1-ը (№ 2273)՝ Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի գրատանը: Գանձասարում գրված մի ձեռագիր էլ («Գիրք աղօթից և տաղք», ժամանակ՝ 1713, գրիչ՝ Յակոբ Երէց) եղել է Գալուստ Շերմազանյանի անձնական հավաքածուի մեջ (№ 27), իսկ մեկ ուրիշը («Աւետարան», ժամանակ՝ 1632, կազմող՝ Պողոս աբեղայ վանեցի)՝ Գանձակի ս. Հովհաննես եկեղեցում (№ 7):

Որպես կաթողիկոսական նստավայր և գրչության արվեստի կենտրոն, Գանձասարի վանքը ունեցել է նաև իր գրատունն ու գրչագիր մատյանների հավաքածուն: Թե ինչ մատյաններ է բովանդակել հավաքածուն և դարերի ընթացքում քանակական ինչ փոփոխություններ է կրել, դժվար է ասել: Փաստ է, սակայն, որ անցյալ դարի վերջին քառորդին այդ հավաքածուից մնացել էին առանձին փշրանքներ միայն, որոնց և անդրադարձել են Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը, Մակար եպս. Բարխուդարյանը և Հակոբ Թոփճյանը: Այսպես.

Ա. Մեսրոպ արքեպ. Սմբատյանց, ՀԿարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ, Տփխիս, 1904, էջ 125—126՝ «Ի Գանձասարայ—ի 1868 ամի ցուցակի».—Մ. Սմբատյանցի կողմից 1868 թվականին կազմված սույն ցուցակի ուր գտնվելը մեզ հայտնի չէ և չգիտենք, թե քանի ձեռագիր է բովանդակել: Այստեղ այդ ցուցակից հիշատակվում են միայն Երնջակում գրված թվով 6 (№№ 1—6) ձեռագրեր: Այդ 6 ձեռագրերից Մ. Բարխուդարյանը տեսել և արձանագրել է 1-ը (№ 4), այն էլ խիստ քայքայված վիճակում, իսկ Հ. Թոփճյանը ոչ մեկը չի տեսել: Արձանագրված 6 ձեռագրերից այսօր որոշակիորեն միայն 1-ն է (№ 6) գտնվում Մաշտոցի անվան Մատենադարանում: Այն նախ մուտք է գործել Գևորգյան ճեմարանի հավաքածուն (№ 51), ապա 1907 թվականին փոխանցվել Էջմիածնի Մատենադարան («Գևորգյան» հավաքածու № 1195): Մնացած հինգ ձեռագրերի ուր գտնվելը մեզ հայտնի չէ: Բացակայող ձեռագրերն են.

№ 1. «Աւետարան՝ գրեալ ի թին ՌՃՄԴ (1695), ի գիւղաքաղաքն Շօռոթ, ի հայրապետութեան տեառն Նահապետի»:

№ 2. «Գիրք ստորագրութեանց (ստորո-

գութեանց) Արիստոտելի՝ գրեալ ի 17 յոբելեանի և 8 թուոյ, որ է թիւն հայոց ՊԾԸ (1409), ի Կոքու վանս, ընդ հովանեաւ սուրբ Նշանին Հազարուբիւրք անուանեալ»:

№ 3. «Աւետարան՝ գրեալ ի Պօղոս գրչէ, յերկիրն Շահաբունու ձոր, ընդ հովանեաւ Սուրբ Մարտիրոս վանացն... յառաջնորդութեան Եսայեայ վարդապետի, որ նորոգեաց զՍուրբ Կարապետն ի հիմանց... ի թագաւորութեան փոքր Շահապասին, ի թիւն ՌՃՍ (1652)»:

№ 4. «Ցայսմաւուրք՝ գրեալ ի թիւն ՌՃԺԲ (1663), ի Շօռոթ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին... Յիշեցէք զվանահայրն Բիստու Սուրբ Նշանին... որ մերձ է գեղջն Տնու»:

№ 5. «Թուղթ Թօմայի Ագուիանացւոյ՝ գրեալ յամի տեառն 1345 և Հայոց ՉՂԴ, ի Վերին վանքն Քռնոյ... ձեռամբ Ֆրէր Յակոբայ...»:

Ա. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Մ. Սմբատյանցի 1868 թ. ցուցակի)

Սմբատյանց 1868	Բարխուդար. 1895	Գևորգյան հեմարան	«Գևորգյան» հավաքածու	Մատենադարան
1	—	—	—	—
2	—	—	—	—
3	—	—	—	—
4	1	—	—	—
5	—	—	—	—
6	—	51	1195	3616

Բ. Մակար եպս. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 172—180՝ «Գանձասարի վանք».—Մ. Բարխուդարյանը Գանձասարի վանքում տեսել և արձանագրել է միայն 3 ձեռագիր՝ 1 «Ցայսմաւուրք» (№ 1), 1 «Սարգիս Շնորհալի» (№ 2) և 1 «Մեկնութիւն Նարեկի» (№ 3): Այս ձեռագրերից Մ. Սըմբատյանցը տեսել և արձանագրել է միայն «Ցայսմաւուրք»-ը (№ 1), իսկ Հ. Թոփճյանը ոչ մեկը չի տեսել և չի արձանագրել: Այդ 3 ձեռագրերից այսօր Մաշտոցի անվան Մատենադարանում առկա են միայն 2-ը (№№ 2, 3), որոնց ստուգությունը, սակայն, թեական է: Այդ ձեռագրերը Մատենադարան են մուտք գործել 1910—1915 թվականների ընթացքում՝ անհայտ ուղիներով: Բացակայում է № 1-ը («Գրչագիր Ցայսմաւուրք, գրուած թղթի վերայ... բորբոսած և ոչնչացած է»), որը հավանաբար չի պահպանվել:

Բ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Մ. Բարխուդարյանի 1895 թ. ցուցակի)

Բարխուդար. 1895	Սմբատյանց 1868	Մատենադարան
1	4	—
2	—	3780
3	—	4383

Գ. Հակոբ Թոփճյան, ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 44—45՝ «Գանձասարի գրչագրերը».—Ցուցակում 1—30 թվահամարների ներքո խիստ համառոտակի արձանագրված են 30 ձեռագրեր, որոնցից և ոչ մեկը Սմբատյանցն ու Բարխուդարյանը չեն տեսել ու չեն նկարագրել: Արձանագրված 30 ձեռագրերից այսօր որոշակիորեն Մաշտոցի անվան Մատենադարանում են գտնվում միայն 14-ը (№№ 1, 4, 7, 8, 9, 12, 13, 15, 19, 20, 24, 25, 27, 28), իսկ մնացած 16-ի (№№ 2, 3, 5, 6, 10, 11, 14, 16, 17, 18, 21, 22, 23, 26, 29, 30) հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ, նշենք միայն, որ պահպանվել են բացակայող № 18 և № 29 ձեռագրերի հիշատակարանները, որոնք մայր ձեռագրերից անջատվել են անցյալ դարի 70-ական թվականներին Խաչիկ Դաղյանի ձեռքով և որոնցից 1-ը (№ 18-ի հիշատակարանը), որպես առանձին միավոր, նկարագրված է նույն ցուցակի «ժողովածու յիշատակարանաց» բաժնում № 39-ի տակ (էջ 35): Բացակայող այդ 2 ձեռագրերի հիշատակարանները Մաշտոցի անվան Մատենադարանի «Պատառիկների ֆոնդում» զբաղեցնում են հերթական 869 և 1017 թվահամարները:

Առկա 14 ամբողջական ձեռագրերից 5-ը (№№ 7, 12, 15, 25, 28) Էջմիածին են տեղափոխվել 1885—1905 թվականների ընթացքում և մտել «Գևորգյան» կոչվող հավաքածուի մեջ, այդ թվում 1-ը (№ 12) «ընդ ձեռն գեր. առաջնորդի Արցախոյ Կարապետ եպս.-ի», 8-ը (№№ 1, 4, 8, 9, 19, 20, 24, 27)՝ 1910—1915 թվականներին, իսկ 1-ը (№ 13), որը Գանձասարից նախ տարված է եղել Հաթերք, ապա՝ Լծենի ս. Ստեփաննոսի եկեղեցին, 30-ական թվականներին ձեռք է բերել Երևանի Գրական թանգարանը և 1938 թվականին փոխանցել Մաշտոցի անվան Մատենադարան: Ինչ վերաբերում է բացա-

կայող № 18 և № 19 ձեռագրերի հիշատակարաններին, ապա դրանք, առկա № 19 ձեռագրի հիշատակարանի հետ միասին, որը ի միջի այլոց նույնպես Խաչիկ Դադյանի ձեռքով անջատված է եղել մայր ձեռագրից և նկարագրված է նույն ցուցակի «Ժողովածու յիշատակարանաց» բաժնում № 35-ի տակ (էջ 34), Էջմիածին են մուտք գործել 1903 թվականին՝ Խաչիկ Դադյանի ձեռագրերի հետ միասին: Ավելորդ չի լինի նշել, որ առկա № 19 ձեռագրի 2 մասերը երկար տարիներ պահվում էին անջատ-անջատ, բուն մասը՝ № 3696-ի, իսկ հիշատակարանը՝ № 9379-ի տակ: Միայն վերջերս հնարավոր եղավ ճշտել դրանց ինքնությունը և միացնել իրար:

Ստորև տալիս ենք բացակայող 16 ձեռագրերի նկարագրությունը այնպես, ինչպես արձանագրված են Թոփճյանի ցուցակում.

2. «Աւետարան, կոստղած, բոլորգիր, անյիշատակարան»:

3. «Աւետարան, կոստղած, բոլորգիր, անյիշատակարան»:

5. «Աւետարան, գրուած ի թագաւորութեանն Լեւոնի»:

6. «Աւետարան, ի թին Հայոց ՌԻ (1571), ի դուռն ս. յաթոռիս յԱմենափրկչի և ընդ հովանեաւ ս. Աստուածածնին, ի յերկիրս Խաչեաց, ի հայրապետութեան տեառն Գրիգորիսին՝ որդի Մէհրապ պեկին, իշխանութեան Շահ Թահմասին»:

10. «Կանոնագիրք, մեծադիր, բոլորգիր»:

11. «Ցանկ Աստուածաշնչոց»:

14. «Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու»:

16. «Աւետարան, փոքրադիր, բոլորգիր, թուական ՊԶԷ (1438), ստացող՝ Վարդան քահանայ, ոսկեշար և գեղեցիկ նկարներով»:

17. «Աստուածաշունչ, մագաղաթից, բոլորգիր»:

18. «Քարոզգիրք, բոլորգիր»:

21. «Մաշտոց, նօտրգիր»:

23. «Քերականութիւն, նօտրգիր, ՊԽ (1391)»:

23. «Ներածութիւն Պորփիւրի»:

26. «Բուն Մաշտոց, բոլորգիր»:

29. «Մեկնութիւն Սաղմոսաց, նօտրգիր»:

30. «Գիրք առաքինութեանց և մոլորութեանց, ՌՃԻԹ (1680)»:

Գ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Հ. Թոփճյանի 1900 թ. ցուցակի)

Թոփճյան 1900	Գրական թանգարան	Մատենադարան	
		Գնորդ-գլան	Արդի
1	—	—	4185
2	—	—	—
3	—	—	—
4	—	—	4176
5	—	—	—
6	—	—	—
7	—	990	2825
8	—	—	4055
9	—	—	4048
10	—	—	—
11	—	—	—
12	—	368	3196
13	1223	—	7767
14	—	—	—
15	—	1033	3555
16	—	—	—
17	—	—	—
18	—	—	Պ869
19	—	—	3696
20	—	—	4051
21	—	—	—
22	—	—	—
23	—	—	—
24	—	—	3468
25	—	1053	2449
26	—	—	—
27	—	—	3971
28	—	1038	3606
29	—	—	Պ1017
30	—	—	—

Դ. Չարձանագրված ձեռագրեր.—Բացի վերոհիշյալ ձեռագրերից, Մաշտոցի անվան Մատենադարանում առկա են ևս 5 ձեռագրեր (№№ 2399, 3140, 3829, 4411, 9150), որոնք չեն արձանագրված ոչ Սմբատյանցի, ոչ Բարխուդարյանի և ոչ էլ Թոփճյանի մոտ: Առաջին ձեռագիրը (№ 2399) Էջմիածին է տեղափոխվել 1885 թվականին և մտել «Գևորգյան» հավաքածուի մեջ (№ 369), երկրորդ, երրորդ և չորրորդ ձեռագրերը (№№ 3140, 3829, 4411)՝ 1910—1915 թվականների ընթացքում, իսկ վերջինը (№ 9150)՝ 1903 թվականին Խ. Դադյանի ձեռագրերի շարքում: Այն Խ. Դադյանի ձեռքով անջատված է մայր ձեռագրից և որպես առանձին միավոր նկարագրված Թոփճյանի ցուցակի Բ մասի «Յիշատակարանք ձեռագրաց» բաժնի № 10-ի տակ (էջ 29): Նշենք նաև, որ № 4411 ձեռագիրը 1818 թվականին Չարեքի վանքից Գանձասար է բերված ժամանակի վանա-

հայր Բաղդասար վրդ. Զալալյանցի ձեռքով:

Ամփոփելու դեպքում կարող ենք ասել, որ Գանձասարի նախկին գրատան ձեռագրերից մեզ հայտնի են 43-ը, որոնցից 22-ը (և 2 պատառիկ) այսօր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մնացած 21-ի (բացի 2-ի հիշատակարաններից) ուր գտնվելը հայտնի չէ: Այսպես.

№№ ը/կ	Ըստ ցուցակների	Քանակ	Առկա	Բացակա
1	Ըստ Մ. Սմբատյանցի	6	1	5
2	Հավելյալ Բարխուդարյանի մոտ	2	2	—
3	Հավելյալ Թոփճյանի մոտ	30	14(+2)	16(—2)
4	Զարձանագրված	5	5	—
	Ընդամենը	43	22(+2)	21(—2)

Ստորև տալիս ենք առկա ձեռագրերի հին և նոր թվահամարների հակադարձ համեմատական տախտակը, որը ամփոփում է մեր ողջ շարադրանքը:

Դ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի)

Մատենադարան		Գրական թանգարան	Գևորգյան ճեմարան	Զարեքի վանք	Սմբատյանց 1868	Բարխուդար. 1895	Թոփճյան	
Արդի	«Գևորգյան»						Գանձասար	Հիշատակարանք
2399	364	—	—	—	—	—	—	—
2449	1053	—	—	—	—	—	25	—
2825	990	—	—	—	—	—	7	—
3140	—	—	—	—	—	—	—	—
3196	368	—	—	—	—	—	12	—
3468	—	—	—	—	—	—	24	—
3555	1933	—	—	—	—	—	15	—
3606	1038	—	—	—	—	—	28	—
3616	1195	—	51	—	6	—	—	—
3696	—	—	—	—	—	—	19	35
3780	—	—	—	—	—	2	—	—
3829	—	—	—	—	—	—	—	—
3971	—	—	—	—	—	—	27	—
4048	—	—	—	—	—	—	9	—
4051	—	—	—	—	—	—	20	—
4055	—	—	—	—	—	—	8	—
4176	—	—	—	—	—	—	4	—
4185	—	—	—	—	—	—	1	—
4383	—	—	—	—	—	3	—	—
4411	—	—	—	+	—	—	—	—
7767	—	1223	—	—	—	—	13	—
9150	—	—	—	—	—	—	—	10
Պ869	—	—	—	—	—	—	(18)	39
Պ1017	—	—	—	—	—	—	(29)	—

ՀԱՌԻՃԻ ՎԱՆՔԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազարանոց հավաքածուի բաղկացուցիչ մասերից մեկն է նաև Հառիճի վանքի հայերեն ձեռագրերի հավաքածուն, որը ներկայումս ամփոփում է ԺԳ—ԺԸ դարերում ընդօրինակված տարբեր բովանդակությամբ 23 ձեռագրեր:

Թեև Հառիճի վանքը հայոց հինավուրց վանքերից է և պատմական առանձին ժամանակահատվածներում (X—XI, XII—XIII) եղել է գործող մենաստան[1], սակայն իր հեղհեղուկ ճակատագրի բերումով՝ հայ եկեղեցու և հայ մշակույթի կյանքում առանձին դեր չի կատարել: Այդ օրերից պահպանված և մեզ հասած միակ գրական հուշարձանը Հովհան Ոսկեբերանի Եփեսացոց թղթի մեկնությունն է, որը 1219 թվականին Հառիճի վանքում ընդօրինակել է Հովհաննես գրիչը և նվիրաբերել նույն վանքին (Մատենադարան, № 1382):

Բացառված չէ, անշուշտ, որ Հառիճի վանքում գրված լինեն նաև այլ ձեռագրեր և վանքը ունեցած լինի իր գրատունն ու ձեռագիր մատյանների իր հավաքածուն: Սակայն, ձեռագրերի ներկա հավաքածուն ոչ մի առնչություն չունի վանքի նախկին միաբանական կյանքի հետ և կազմված է բացառապես 1830 թվականից հետո, երբ, գրեթե վեցդարյա ընդմիջումից հետո, Ստեփաննոս եպս. Խաժակնյանի և հատկապես նրա հաջորդ Պողոս վրդ. Զալլադյանի ջանքերով կրկին կենդանություն են ստանում Սարգիս Ծոնի հիմնադրած ս. Գրիգորի տաճարն (X դ.) ու Զաքարե Ամիրսպասալարի կառուցած ս. Աստվածածին կաթուղիկեն (1201 թ.)[2]:

Ասածից հետևում է, որ Հառիճի վանքի ձեռագրական ներկա հավաքածուն, մինչև Էջմիածին տեղափոխվելը, ունեցել է ընդամենը 80 տարվա կյանք (1830—1910):

Հավաքածուի 23 ձեռագրերից 2-ը (№№ 2674, 2853) Էջմիածին են տեղափոխվել 1880 թվականին՝ Գևորգ Դ-ի կարգադրությամբ[3], 1-ը (№ 3946)՝ 1903 թվականին Խաչիկ Դադյանի հավաքածուի կազմում (№ 34)[4], իսկ մնացած 20-ը (№№ 2483, 2484, 2665, 2666, 3426—3428, 3630, 3633, 3709, 3711—3715, 3846—3850)՝ 1910-ին, ժամանակի վանահայր Երեմիա վարդապետի միջոցով[5]:

Նշված ձեռագրերից 15-ը բանասիրությանը հայտնի են Մեսրոպ Տեր-Մովսիսյանի՝ «Արարատ» ամսագրում լույս ընծայած «Նոր ստացված ձեռագրեր» հոդվածից[6]: Այդտեղ Մ. Տեր-Մովսիսյանը խոսելով 1910 թվականին Էջմիածին մուտք գործած նոր ձեռագրերի մասին, գրում է. «Հառիճայի վանքի ձեռագրերը թվով 20 հատ Էջմիածին բերավ վանահայր Երեմիա վարդապետը. սոցանից 13-ը Ավետարան, 7-ը՝ եկեղեցական ծիսական այլ գրքեր» և, ապա, 3—5 և 7—17 թվահամարների տակ տալիս է մուտք գործած ձեռագրերից 15-ի նկարագրությունը (տե՛ս կից տախտակը):

Բացատրության կարգով նշենք, որ 8 թվահամարը թյուրիմացաբար կրկնված է. այն պայմանականորեն նշանակում ենք 8ա, 8բ, իսկ 1, 2, 6 թվահամարների տակ նկարագրված են Թավրիզից (№ 1), Կարսից (№ 2) և Երևանից (№ 6) բերված ձեռագրեր:

Թե ում են պատկանել նշված ձեռագրերը նախքան Հառիճի վանքի հավաքածուի մեջ մտնելը, գրեթե ոչինչ հայտնի չէ: Ստորև բերում ենք ձեռագրերի մեջ պահպանված անունների ցանկը.

Աբրահամ վրդ., 1836 թ.—1 (№ 3633):

Հովակիմ և Հովհաննես եղբայրներ, Ադեքսանդրապոլ, 1848 թ.—1 (№ 3712): Նվիրել են Հառիճի վանքին:

Հովհաննես վրդ. Դարաշամբեցի, Կարսի առաջնորդ, 1799 թ.—1 (№ 3849): Գնել է Ղոշավանքի միաբան Սարգիս վարդապետից և նվիրել նույն վանքին:

Սարգիս վրդ., միաբան Ղոշավանքի, 1799 թ.—1 (№ 3849): Վաճառել է Հովհաննես վրդ. Դարաշամբեցուն:

Սարգիս վրդ. Շիրակավանեցի, 1812—1820 թթ.—1 (№ 2853): Նվիրել է ս. Հովհաննես Մկրտչի տաճարին:

Վարդաբլուր գյուղ, Լոռի—1 (№ 3850):

---

[1] **Աբել արք. Մխիթարյան**, Պատմութիւն Հառիճոյ ի Շիրակ, Տփխիս, 1856: Տե՛ս նաև՝ **Ղևոնդ Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 157—164:

[2] Անդ, էջ 42—45:

[3] Ձեռագրերի վրա կան համապատասխան մակագրություններ:

[4] **Հակոբ Թոփճյան**, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898:

[5] «Արարատ», 1910, № 6, էջ 536:

[6] Անդ, № 6, էջ 535—537, № 7, էջ 623—626:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑԱՆԿ
ՀԱՌԻՄԻ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

№ № ը/կ	«Վարարատ» 1910	Խ. Դադյան	Մատենադարան		№ № ը/կ	«Վարարատ» 1910	Խ. Դադյան	Մատենադարան	
			«Գևորգյան»	Արդի				«Գևորգյան»	Արդի
1	—	—	1375	2483	13	7	—	1361	3711
2	—	—	1377	2484	14	8ա	—	1362	3712
3	3	—	1357	2665	15	8բ	—	1363	3713
4	5	—	1359	2666	16	9	—	1364	3714
5	—	—	82	2674	17	12	—	1367	3715
6	—	—	84	2853	18	10	—	1365	3846
7	16	—	1371	3426	19	11	—	1366	3847
8	—	—	1373	3427	20	13	—	1368	3848
9	—	—	1374	3428	21	14	—	1369	3849
10	17	—	1372	3630	22	15	—	1370	3850
11	—	—	1376	3633	23	—	34	—	3946
12	4	—	1358	3709					

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԴՐԱԴԱՐԱՆ
ԱՏԱՓԻՄ